

«Փառք Յարութեան Քո Տէր»


Սուրբ Յարութեան խորհուրդը մեր էութեան մէջ կը հաստատէ կեանքը իր երկու երեսներով. ներկայ, որուն ներկայ պատկերն ենք եւ հորիզոնէն անդին մեզ սպասող յաւիտեանական կեանքը, որուն յոյսով նոյնքան էական է ներկայ ժամանակը Աստուծոյ հետ ապրելու տեսակետէն: Սուրբ Յարութեան խորհուրդը ոսկէ օղակ է մեզ Արարիչ Աստուծոյ հետ կապող, միմիանց դարձնելով սրտակից, բոլորիս շնորհները ի մի բերելով դարձնելով գորութեան:

Յարութեան փրկարար խորհուրդով է մեր ժողովուրդը դարեր շարունակ դիմագրաւեր է դժուարութիւններն ու գրկամեծները, Յարութեան հաւատքով լուսաւորեր է իր հոգեւոր ու ազգային կեանքը եւ կերտեր է իր փառաւոր յաղթանակները:

Սիրելի հարազատ հայորդիներ, դուք էք Քրիստոսի Յարութեան գործիւնը խորհրդանշող ներկայութիւնը ձեր հաւատքով ու սիրով: Սիրեցէ՛ք զԱստուած ձեր հաւատքի ամուր կեանքով, ձեր օնախները վերածեցէ՛ք մէյմէկ եկեղեցիի որպէսզի մեր կեանքը ըլլայ ապահով ու հաստատ:

«Քրիստոս Յարեալ Ի մեռելոց, Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԼՏՈՐԱԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀԱՅՏԱՆՈՒՄԸ

2.- Պատրաստութիւն ընծաներուն

Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՌԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՅՈՒՆ


Մինչ պատարագիչ քահանան իր լուռ գոհունակութիւնը կը մատուցանէ, սարկաւազը կը հրաւիրէ ժողովուրդը, որպէսզի անոնք եւս գոհաբանութեամբ օրհերգութեամբ զԱստուած փառաւորեն.-

«Մանաւանդ դուք՝ որ հաւատքով ճաշակեցիք աստուածային, սուրբ, երկնային, անարատ եւ անպական այս Խորհուրդը, շնորհակալութիւն յայտնեցէ՛ք Տիրոջ»:

Եւ դպիրներ սարկաւազին թելադրութիւնը լսելով, գոհաբանական երգ կը մատուցանեն երկնաւոր Հօր.-

«Շնորհակալութիւն կը յայտնենք քեզի, Տէ՛ր, որ մեզ կերակրեցիր...

Շարունակելի



ԺԸ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 20 ԱՊՐԻԼ 2025

ԹԻԻ 16

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՀՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գրծ. 2.22-41: Ղկ. 24.1-12 **ԶԱՏԻԿ**

ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ

ՂՈՒԿԱՍ 24. 1-12

Շաբաթ օրը երբ անցաւ, Մարիամ Մագդաղենացին, Մարիամ՝ Յակոբի մայրը եւ Սողոմէն զացին խումկեր գնեցին եւ պատրաստեցին, որպէսզի երթան եւ օծեն Յիսուսի մարմինը: Կիրակի առաւօտ կանուխ, արեւածագին, գերեզման եկան: «Ո՛վ պիտի գլորէ գերեզմանի մուտքին դրուած քարը», կը հարցնէին իրարու, որովհետեւ քարը շատ մեծ էր: Սակայն երբ նայեցան, տեսան որ քարը արդէն իսկ գլորուած էր: Գերեզմանէն ներս մտան եւ ճերմակ զգեստ հագած երիտասարդ մը տեսան, որ աջ կողմը նստած էր: Սարսափեցան: Երիտասարդը ըսաւ անոնց. «Մի՛ վախճաք, գիտեմ որ խաչուած Նազովրեցի Յիսուսը կը փնտռէք, բայց հոս չէ, յարութիւն առաւ: Տեսէ՛ք զինք հոս դրած էին: Այժմ զացէ՛ք, ըսէ՛ք իր աշակերտներուն եւ Պետրոսի, որ ահա Յիսուս ձեզմէ առաջ կ'երթայ Գալիլիա: Հոն պիտի տեսնէք զինք, ինչպէս որ ըսած էր ձեզի»:

Երբ ասիկա լսեցին, դուրս փախան գերեզմանէն, զարհուրած եւ ապշահար, ու ոչ մէկուն բան մը ըսին, որովհետեւ կը վախճային:

Աստուած իր Ողորդին խաղաղութիւնը տուաւ մեզի

«Մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ դրուեցաւ» (Ես 53.5): Աստուած առաւ մեր մեղքերուն պատճառած խռովութիւնը եւ զայն դրաւ Քրիստոսի վրայ, եւ առաւ Քրիստոսի խաղաղութիւնը եւ զայն դրաւ մեր վրայ: Քրիստոսի կապուած մարդը իր սրտին մէջ կը կրէ այն խաղաղութիւնը, որ Քրիստոս ինք ունէր: Քրիստոսապարզեւ խաղաղութիւն ո՛չ միայն մեզ խաղաղ կը պահէ փորձութեանց դիմաց, այլեւ՝ յաղթող կը դարձնէ անոնց դէմ: Կեանքի ծովերը միշտ կրնան փոթորկիլ եւ սարսափի ու յուսահատութեան մատնել մարդիկը, բայց անոնք որոնք Աստուծոյ զաւակներն են, անոնք անվրդով կերպով կը շարունակեն իրենց հաւատքի զնացքը յաղթականօրէն:

ԲՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ

ՕՐԴԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ԲՐԻՍՏՈՍԻ

Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿԱՍ ԶԱՏԻԿ



Զատիկ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եկեղեցական օրացոյցին մէջ այսպէս անշատ կերպով յիշուած են Զատիկը եւ Յարութիւնը:

1.- Ի՞նչ է Զատիկ քառին իմաստը:
Զատիկ քառը ունի բազմաթիւ բացատրութիւններ: Ոմանք նմանութիւն կը գտնեն Եբրայեցիներու Պասեֆին (Passover) հետ: Պասեֆ կը նշանակէ ելք: Հրեաներու ամենէն մեծ ու յարգուած տօներէն մէկն է Պասեֆը: Անոնք կը յիշատակեն Եգիպտոսի ծանր լուծէն իրենց ազատիւն ու ելքը: Իսկ մենք՝ Քրիստոնեաներս, Յիսուսի չարչարանքի արդիւնքով հրաշափառ Յարութեամբ կը յիշատակենք մարդկութեան մահուան իշխանութենէն ու սատանայի ծառայութենէն դուրս գալը եւ երկնքի արքայութեան արժանի դառնալը: Յիսուսի կեանքին վերջին դրուագները տեղի ունեցան հրեաներու Պասեֆի տօնին:

2.- Զատկուան ժողովրդական սովորութիւններ: Զատկուան ժողովրդական սովորութիւններէն կարելի է յիշատակել հաւկիթը կարմիր ներկելը եւ հաւկիթախաղը:

Հիմները հաւկիթը կ'ընդունէին իբրեւ տիեզերքի խորհրդանշան եւ կը հաստատէին, թէ հաւկիթին կեղեւը կը նշանակէ ցամաքը, սպիտակը՝ ջուրը, դեղնուցը՝ կրակը:

Սովորութիւն էր գարնանամուտի օրը իբրեւ ընծայ իրարու հաւկիթ տանիլ, մանաւանդ կարմիր: Նաեւ ոսկիէ կամ արծաթէ շինուած կարմիր հաւկիթներ կը տարուէին իշխաններուն, իբրեւ հպատակութեան նշան: Ասիկա արեւելքի մէջ, մանաւանդ հայերուն եւ պարսիկներուն մօտ:

Բոլոր կրօններուն մէջ ալ հաւկիթը իր կարեւոր տեղը ունէր, մինչեւ իսկ Հռոմէացիները եւ յոյները հաւկիթ կը նուիրէին իրենց աստուածներուն՝ սրբուելու եւ մաքրուելու համար:

Հրեաները Պասեֆի տօնին կը պատրաստէին բաղարջ հաց (առանց թթիւ մորի հաց): Պասեֆի սեղանին վրայ անպայման պէտք էր ըլլար նաեւ գառկական գառնուկը եւ պինդ խաշուած հաւկիթը:

Հաւանաբար Պասեֆի այս սովորութիւնը փոխանցուեցաւ քրիստոնեաներուն:

Զատկական հաւկիթը Քրիստոնեային համար խորհրդանշէն է այն ժայռէ գերեզմանին, ուրկէ Քրիստոս Յարութիւն առաւ:

3.- Ինչո՞ւ հաւկիթը կարմիր կը ներկեն:

Կարմիր ներկը անցեալին ամէն տեղ չէր գտնուեր: Յայտնի է, թէ կարմիր ներկին հայրենիքը Արեւելքն է, ուր կը գտնուի որդան կարմիրը, որմէ կ'արտադրուէր կարմիր ներկը եւ կը տարածուէր ամբողջ աշխարհին մէջ:

Հաւկիթը կարմիր ներկելու աւանդութիւնը կը բացատրուի հետեւեալ ձեւով: Նախ կարմիրը սիրոյ գոյնն է: **Նրկորդ**՝ հայերը բնապաշտ ժողովուրդ եղած են, եւ բնութեան մէջ գերընտիր բերքն է որդան կարմիրը: Ինչպէս, որ բնութեան ծննդաբերութիւններուն մէջ հրաշալի է հաւկիթը, ուստի հաւկիթը կարմիր ներկելով նուիրագործած են գայն: **Նրկորդ**՝ հաւկիթը կարմիր կը ներկուի որպէս ուրախութեան նշան: **Չորկորդ**՝ կարմիրը կը խորհրդանշէ նաեւ, որպէս գոռի արիւնը, որ կը բացատրուի իբրեւ Քրիստոսի թափած արիւնը աշխարհի փրկութեան համար:

Հաւկիթը կը ներկեն Զատկուան նախորդ օրը՝ Շաբաթ օր:

**ՎՍՏԱՀԱՔԱՐ ԿԸ ԽՕՍԻՆԸ
ՅԻՍՈՒՍԻ ՄԱՍԻՆ ԲԱՅՅ ԿԸ
ՃԱՆՉՆԱԼԸ ՅԻՍՈՒՍԸ**

«Անոնց աչքերը այնպէս մը ծածկուած էին, որ չէին ճանչնար վայն» (Ղկ. 24.16): Ահաւասիկ Յիսուսի երկու աշակերտներ, որոնք թէեւ կը խօսէին Յիսուսի մասին, եւ թէեւ Յիսուս մօտեցաւ իրենց եւ սկսաւ իրենց հետ քալել, եւ սակայն, անոնք չզգացին անոր ներկայութիւնը եւ չճանչցան վայն:

**ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ
ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ**

Զգոյշ ըլլանք մեր անձերուն: Զըլլայ, որ մենք եւս անոնց նման կը խօսինք Յիսուսի մասին եւ սակայն չենք զգար անոր ներկայութիւնը: Զըլլայ, որ Յիսուս մեզի կը մօտենայ եւ կ'ընկերակցի մեզի, ինչպէս անոնց մօտեցաւ եւ ընկերակցեցաւ, բայց չենք ճանչնար վինք: Որքա՞ն ցաւալի է տեսնել այնպիսի մարդիկ, որոնք կը խօսին Յիսուսի մասին եւ Յիսուսի անունով, եւ սակայն, չե՛ն ճանչնար Յիսուսը եւ չունին անոր ներկայութիւնը իրենց կեանքերուն մէջ: Աշխատինք մեր բերնին մէջ գտնուող Յիսուսը տանիլ մեր սիրտերուն մէջ:

Միասնաբար առիթ ստեղծենք ուսումնասիրել մեր եկեղեցւոյ հայրերուն գրութիւնները հոգեպէս հարըստացնելու համար մեր հոգիները

**ԵՐԲ ԶԻՒՆԱԴՈՒԹԵԱՆԴ
ԲԺՇԿՈՒԹԻՒՆ Կ՛ՈՒԶԵՍ ՄԻԱՍԻՆ
ԿԱՐԴԱՆՔ.**

Սաղմոս 6

Տէ՛ր, գայրոյթիդ մէջ մի՛ յանդիմաներ զիս, բարկութեանդ մէջ մի՛ պատժեր զիս:

Ողորմէ՛ ինծի Տէ՛ր, տկար եմ ես.

Բժշկէ՛ զիս, որովհետեւ մի՛նչեւ ոսկորներս կը դողամ:

Հոգիս ծանր խռովքի մէջ է. մի՛նչեւ ե՞րբ, Տէ՛ր:

Դարձի՛ր, Տէ՛ր, եւ փրկէ՛ զիս. ազատէ՛ զիս մահուրէնէն, որովհետեւ ողորմած եմ:

Որովհետեւ մահուան մէջ ո՞վ պիտի յիշէ քեզ: Անդրաշխարհին մէջ ո՞վ շնորհակալութիւն պիտի յայտնէ քեզի:

Հեծեծելէն յոգնեցայ, ամէն գիշեր ես լացով լուացի իմ մահի՞նս, եւ իմ արցունքներովս թրջեցի անկողինս:

Աչքս մաշեցաւ ողբալէն, տկարացաւ մեղութիւններէս:

Հեռացէ՛ք ինձմէ դուրս բոլորդ, որ անիրաւութիւն կը գործէք, որովհետեւ Տէ՛ր՛ լսեց իմ աղօթքս, եւ խնդրանքս ընդունեց:

Թող ամչանաւ ու սարսափի մատնը՝ ին բոլոր թշնամիներս: Ամօթով մնան եւ իսկոյն հեռանան:

**ՄՏԱԻՈՐ ԳՈՐԾ ՍԿՍԵԼՈՒՑ
ԱՌԱՋ**

Իմաստութիւն Հօր՝ Յիսուս, տու՛ր ինձ իմաստութիւն, զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջիք՝ յամենայն ժամ: Ի չար խորհրդոց ի բանից եւ ի գործոց փրկեա՛ զիս եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն: